ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն՝ «Կապանի թիվ 9 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Մելինե Ավանեսյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Կապան 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....4

1.1 ԾԵՍ, ԾԻՍԱԿԱՐԳ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....4

1.2 ԾԻՍԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....5

1.3 ԾՆՈՂԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԾԵՍԻ ՄԻՋՈՑՈՎ 7

ԳԼՈՒԽ 2. ԱԶԳԱՅԻՆ ԾԵՍԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՄՈՒՐՋ 8

2.1 ԾԻՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ, ԵՐԳ – ՊԱՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ.....8

2.2. ՎԱՐԴԱՎԱՌԻ ԾԵՍԸ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը.

Ժամանակակից նախադպրոցական կրթության խնդիրները լուծելու մանկավարժական միջոցներից մեկը ազգային տոների և ծեսերի կազմակերպումն է կրթական ոլորտում: Այն պահպանում է նախորդ սերունդների ամենահարուստ հոգևոր և բարոյական ժառանգությունը, իմաստությունն ու հոգևոր գեղեցկությունը: Ազգային տոների և ծեսերի կրթական ուղղվածությունը շատ մեծ է և բաղկացած է նրանից, որ այս տոները հարստացնում են նախադպրոցական տարիքի երեխաների պատկերացումները հայ ժողովրդի պատմության և ավանդույթների մասին և թույլ են տալիս նրանց տիրապետել տոնական և ծիսական մշակույթի ավելի բարդ տարրերին:

Այս թեման ներկայումս արդիական է մշակութաբանության, սոցիոլոգիայի, հոգեբանության և մանկավարժության մեջ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ դիտարկել ազգային տոների և ծեսերի կազմակերպումը կրթական գործընթացում, իրականացնել հետազոտական խնդրի տեսական հիմնավորում, ազգային մշակույթի յուրացում և ազգային ժառանգության փոխանցում:

Ուսուցման համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի և վերջապես գեղեցկության նկատմամբ: Այստեղ նրա մեջ սերմանելու են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է:

Հայ երեխային հայեցի կրթությունը և դաստիարակությունն այնքան են անհրաժեշտ, որքան մեսրոպյան այբուբենը՝ հայոց լեզուն իմանալու համար:

Մենք՝ մանկավարժներս, պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն՝ հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար:

ԳԼՈՒԽ 1 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Ծես, ծիսակարգ, առանձնահատկությունները

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը: Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական, կամ սահմանված կանոններով կրոնական արարողություն, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ:

Ազգային մշակույթի յուրացումը դրված է նախակրթարանի ծրագրի հիմքում, այս դեպքում ազգային ծեսերի իրականացումը դառնում է յուրացման համար հենակետերից մեկը, քանի որ այն արդյունավետ և նոր կազմակերպման ձևերից է:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Երեխաները քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը:

Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը: Սանը պետք է երգի ազգային երգ, ունկնդրի ազգային երաժշտություն, խաղա ազգային ծիսական խաղեր: Նախակրթարանում սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է:

Խաղը զարգացնում է երեխայի

- ուշադրությունը
- հիշողությունը
- երևակայությունը
- ստեղծագործելու կարողությունը
- հաղորդակցման կարողությունը

- շարժողականությունը
- ակտիվությունը
- ընկալումը
- շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը
- շարժումներին տիրապետելու կարողությունը
- ինքնատիրապետումը
- ինքնուրույն աշխատելու կարողությունը
- վերլուծելու, համադրելու կարողությունը
- բառապաշարը:

1.2 Ծիսական խաղերը և դրանց նշանակությունը

Ծիսական խաղերը բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր ու խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զարգացման բոլոր ոլորտները, այնպես էլ գործունեության տարբեր ձևերը: Աշխատանքի ընթացքում օգտագործված հիմնական մեթոդներից են՝

- իրավիճակների խաղարկում
- դերախաղ
- խմբային աշխատանք

Ծիսական խաղերի, ծիսական գործողությունների միջոցով սանը ծանոթանում է ազգային մշակութային այլ դաշտի հետ, որտեղ միասին ներկայանում են խաղը, երգը, պարը, ծիսական գործողությունները:

Դեռ հնագույն ժամանակներից հայերն իրենց ու իրենց երեխաների զվարճանալու ու նաև մարզվելու համար կազմակերպել են բազմազան խաղեր: Այդ խաղերից շատերը զարգացրել են մանուկների ֆիզիկական ուժը, նշանառությունը, ճարպկությունը, արագ կողմնորոշվելու ու որոշում ընդունելու կարողությունը: Հետաքրքիր է, որ նաև հին Հայաստանում տղաները և աղջիկները խաղում էին միասին:

1.3 Ծնողական կրթություն ծեսի միջոցով

Շատ կարևոր է ծնողի մասնակցությունը իր երեխայի ծիսական գործունեությանը: Ծեսը ծնողին համեմատաբար հասկանալի իրողությունն է, նրա ակտիվ մասնակցությունը դրան ավելի դյուրին է, քան դպրոցական որևէ այլ արարողության: Նա պատրաստ է մասնակցել ծիսական բոլոր արարողություններին, որովհետև կենցաղում ինքը դրա կարիքն ունի, որովհետև ինքը դա կիրառում է, բայց նյութին չի տիրապետում: Նա սովորում է իր երեխայի սովորած երգերն ու պարերը, նրա հետ եվում է ծիսական կերակուրները՝ միաժամանակ մասնակից դառնալով իր երեխայի ուսումնական գործընթացին:

Արդյունքում ծնողը ոչ միայն կրթվում է, այլև դառնում է նախակրթարանի գիտակից պատվիրատուն ու գործընկերը:

ԳԼՈՒԽ 2 ԱԶԳԱՅԻՆ ԾԵՍԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՄՈՒՐՋ

2.1 Ծիսական միջավայրը, երգ-պարը երեխայի զարգացման միջոց

Երեխայի հերդաշնակ և հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկն ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթներ, ծեսեր, տոներ: 21–րդ դարի սկզբին հայտնվել ենք մի տխուր փաստի առջև. մենք կորցրել ենք ազգային շատ կարևոր արժեքներ և փորձում ենք վերականգնել կորցրածը: Այս գործը պետք է սկսել վաղ հասակից, այսինքն՝ ծնված օրվանից: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում, հասարակության մեջ չի պահպանվել ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախակրթարանից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը:

Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ծիսական երգ-պարի, խաղերի միջոցով սաների մոտ պատկերացումներ ենք ձևավորում ազգային տոների, ավանդույթների, երգ-երաժշտության մասին: Ուստի այն նաև ազգայինը պահպանման ու տարածման նշանակություն ունի: Եվ ինչ է պետք երեխային, եթե ոչ ազգային հիմք, որը պետք է սերմանվի հենց մանուկ հասակից՝ նախակրթարանից:

Մեր նախակրթարանում ամեն տարի մեծ ոգևորությամբ նշվում են ազգային ծեսերը՝ազգային երգ ու պարով, խաղիկներով և խաղերով: Դաստիարակներով մասնակցել ենք նախակրթարանի կողմից կազմակերպված մեթոդժամին՝ «Ազգային խաղերը՝ երեխայի հանաչողական, մտավոր և ֆիզիկական զարգացման միջոց» թեմայով և պատրաստել ենք ծիսական տարբեր պարագաներ:

«Ծեսով ուսուցում» նախագծով վերապատրաստման դասընթաց է կազմակերպվել մեր նախակրթարանում, որի ընթացքում պատրաստել ենք թեմատիկ տեխնոլոգիական աշխատանքներ:

2.2. ՎԱՐԴԱՎԱՌԻ ԾԵՍԸ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Այժմ ուզում նախակրթարանում իմ մասնակցությամբ իրականացված ծեսերից մեկը՝ Վարդավառը:

Թեմա՝ «Վարդավառի ծես»

1. Նպատակը

- ծանոթանալ ազգային ծեսերին ու տոներին,
- ծեսը վերակենդանացնել, նոր կյանք տալ:

2. Սովորողների խումբը՝

   ավագ խումբ

3. Ընթացքը

- տարբեր աղբյուրներից ուսումնասիրում ենք Վարդավառի ծեսը,
- համակարգում ենք հիմնական գործողությունները,
- որոշում ենք՝ ծիսական որ գործողությունների վրա է կառուցվելու ծեսը,
- սովորում ենք Վարդավառի ծիսական, ծեսին համապատասխան երգեր, պարերգեր, պարեր,

- սովորում են պատրաստել Խաչբուռ, որը կարելի է պատրաստել ինչպես հասկերից, այնպես էլ՝ ծաղիկներից (Դանիել Վարուժան, «Խաչբուռ »),
- ծիսական «Խնդում» պատրաստելու համար նախապատրաստում ենք վարունգ, խնձոր, վարդ, վարդի թփեր, ծղոտե զամբյուղ,
- որոշում ենք գործողությունների հաջորդականությունը, կազմում ենք նախնական սցենարը:

4. Աշխատանքների ծավալը և ժամանակացույցը

- ծեսից մեկ ամիս առաջ սկսվում են նախապատրաստական աշխատանքները,
- ծեսն իրագործվում է Վարդավառի օրը (Զատիկից 90 օր հետո):

5. Արդյունքները

կիմանա՝

- ազգային ծեսը,
- ազգային սովորույթը,
- ազգային ավանդական պարերը,
- հայկական ժողովրդական և ծիսական երգերը,
- ծիսական կերպարները,
- ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը,
- ծիսական պարագաները:

կկարողանա՝

- երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր,
- պատրաստել ծիսական պարագաներ,
- խաղալ ժողովրդական, մանկական, ազգային ծիսական խաղեր:

ՎԱՐԴԱՎԱՌ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր սերունդ ապրում է իր ժամանակաշրջանում, այդուհանդերձ կարիք ունի նախորդ սերնդի փորձառություններին ու նրանց ցույց տված ուղղություններին:

Այսօր՝ գիտության և տեխնոլոգիայի զարգացման այս դարաշրջանում, երբ ամեն ինչ արագ փոփոխվում է և միաձուլվում իրար, պետք է անել ամեն ինչ, որպեսզի մեր ազգային մշակույթը չկորչի: Իսկ դրա պահպանման համար պետք է երեխաների մեջ սերմանել սեր և նվիրում մեր ազգային մշակույթի հանդեպ, նրանց դաստիարակել հայեցի:

Ազգային տոներին, ծեսերին մասնակցելու արդյունքում երեխան առնչվում է ազգային երգ ու պարին, սովորույթներին, մշակույթին, ձեռք է բերում նոր գիտելիքներ ու փորձ:

Ծեսի իրագործման ճանապարհը բնական միջավայր է ստեղծում երեխայի գիտելիքների, հմտությունների գործնական արդյունավետ կիրառման, մանկապարտեզ–ընտանիք համագործակցության համար:

Այսպիսով՝ հետազոտական աշխատանքի թեման ուսումնասիրելով և վերլուծելով հասկացա , որ հասել եմ նպատակիս, բայց եթե նախակրթարանը ունենար դինամիկ–բուֆեր նվագարկիչ, մեր փորձը կկարողանայինք տարածել այլ մանկապարտեզներում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտության արդյունքների մշակումից հետո կարող եմ կատարել մի քանի առաջարկ՝

- երեխայի մեջ սերմանել սեր մեր ազգային արժեքների նկատմամբ փոքրուց,
- ծեսի մասին տեղեկատվության հավաքագրումը կազմակերպել սաների միջոցով,
- ծնողներին ներգրավվել կազմակերպվող ծեսերին,
- պատրաստել ծիսական պարագաներ թափոններից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես , 5.2010։
2. Ա. Սարգսյան՝ «Ազգային տոներ։
3. Վ. Բդոյան «Հայ ժողովրդական խաղեր»։
4. Մարինե Մկրտչյան «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր։
5. Հր. Խառատյան «Ազգային ծեսեր, տոներ»։
6. https://ru.docs.wps.com/l/sIPWCuPm-AaT4uJwG?fbclid=IwAR28PTqDCmF-mznhPqf8JeCjqeHHLqu7DHAPlrsfif18XTbBcr_7ZEQ1xwM